ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» սեպտեմբերի 2012թ. N_____ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.345-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Մհեր Վասիլյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 28.12.2009թ. հ.2758492 վկայական) Երևանի Օհանովի փողոցի հ.32/8 հասցեում գտնվող 82.55քմ մակերեսով հողամասը Երևանի Օհանովի փողոցի հ.62 շենքին հարող տարածքում գտնվող Երևան համայնքի սեփականություն հանդիսացող 82.55քմ մակերեսով հողամասի (ծածկագիր՝ 01-007-311-001, տող՝ 4644) հետ փոխանակելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է քաղաքացի Մհեր Վասիլյանին Օհանովի փողոցի հ.32/8 հասցեում սեփականության իրավունքով պատկանող հողամասը փոխանակել համայնքային սեփականություն հանդիսացող Օհանովի փողոցի հ.62 շենքին հարող տարածքում գտնվող համարժեք հողամասի հետ:

Մհեր Վասիլյանը հասարակական նշանակության շինություն կառուցելու նպատակով Օհանովի հ.32/8 հասցեում ձեռք է բերել 82.55քմ մակերեսով հողամաս, սակայն տարածքի հետագա կառուցապատման նպատակահարմարությունից ելնելով՝ մշակված քաղաքաշինական փաստաթղթերի նախագիծը չի համաձայնեցվել, քանի որ նշված տարածքը կանաչապատ է և մայրաքաղաքում կանաչ տարածքների պահպանման և ավելացման աշխատանքների իրականացման շրջանակներում, ինչպես նաև հաշվի առնելով բնակիչների կարծիքը, նպատակահարմար է գտնվել Օհանովի հ.32/8 հասցեում գտնվող հողամասը օգտագործել որպես ընդհանուր օգտագործման կանաչ տարածք:

Ստեղծված իրավիճակում խնդրի կարգավորման նպատակով Մհեր Վասիլյանին առաջարկվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող 82.55քմ մակերեսով հողամասը փոխանակել Օհանովի փողոցի հ.62 շենքի հարող տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 82.55քմ մակերեսով (ծածկագիր՝ 01-007-311-001, տող՝ 4644) համարժեք հողամասի հետ:

Քննարկվող հողամասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2) և 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չեն նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում են 7-րդ գոտում:

Ելնելով վերոգրյալից, նախապատրաստվել է «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշումը, որի ընդունման արդյունքում քաղաքացին հնարավորություն կունենա կառուցել շինությունը Երևանի քաղաքապետարանի կողմից ընդունելի տարածքում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<< ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<< ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ